Ո՞վ է Եսայիան

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Եսայիա անունով մի մարդու խոսքերը: Եսայիան Հին Կտակարանի մարգարե էր: Նա ապրել է Հիսուս Քրիստոսի Ծնունդից շատ առաջ:

Եսայիան ուսուցանել է Հիսուս Քրիստոսի կյանքի մասին: Նա ասել է, որ Հիսուսը խաղաղություն կբերի աշխարհին: Նա ուսուցանել է, որ Հիսուսը կմահանա, հարություն կառնի և մի օր նորից երկիր կվերադառնա:



Հարյուրավոր տարիներ անց Նեփին գրեց Եսայիայի խոսքերը Մորմոնի Գրքում, որպեսզի ուսուցանի մեզ Հիսուս Քրիստոսի մասին: Երբ Հիսուսն այցելեց նեփիացիներին, Նա կիսվեց Եսայիայի խոսքերով: Նա հրավիրեց մեզ ուսումնասիրել դրանք: Երբ մենք ուսումնասիրում ենք Եսայիայի խոսքերը, կարող ենք զգալ Փրկչի սերը և ավելի մոտենալ Նրան: ●

Սուրբ գրությունների մարտահրավեր

Կարդացեք 2 Նեփի 19.6: Հիսուսի քանի՞ անուն է տրված այս հատվածում:

_____

Ո՞ր թռչունը հայտնվեց՝ ցույց տալով, որ Սուրբ Հոգին եղել է Փրկչի մկրտության ժամանակ:

Հուշում. 2 Նեփի 31.8

_____

Ո՞վ է հարություն առնելու:

Հուշում. Ալմա 11.44

_____

Ես կարողանում եմ կարդալ Մորմոնի Գիրքը

Կարդալուց հետո գունավորեք նկարի մի մասը: Դուք կարող եք կարդալ այս սուրբ գրությունները, որոնք *Եկ, հետևիր ինձ* ծրագրի յուրաքանչյուր շաբաթվա ընթերցանության ցանկում են:

Շաբաթ 1. 2 Նեփի 11.2
Շաբաթ 2. 2 Նեփի 24.3
Շաբաթ 3. 2 Նեփի 26.23-24
Շաբաթ 4. 2 Նեփի 32.5
Շաբաթ 5. 2 Նեփի 9.13

ՊԱՏԿԵՐԱՆՆԵՐԸ: ՀԻՍՈՒ ԱՐԻԱՆԻ ԳՈՒՈՐԸ

ՆԿԱՐՆԵՐԸ: ԲԵՆ ՍՈՒՄՆԵՐԻ

Եսայիան ուսուցանել է, որ Հիսուսը «Խաղաղության Իշխանն» է (2 Նեփի 19.6): Նկարեք կամ լուսանկարեք մի բան, որն օգնում է ձեզ խաղաղություն զգալ: Ուղարկեք ձեր նկարը *Ընկեր* ամսագրին:
Դարձերեսի շապիկին կարող եք տեսնել, թե ինչպես դա անել: